

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 148

Նախասահմանութիւն – «Նախասահմանութիւն» բառը գալիս է Յունարէն «փռա-առիժո» բարդ բառից նշանակելով նախօրօք սահմանել կամ որոշել: Աստուածաբանութեան մէջ նախասահմանութեան բառը գործածուում է երկու գլխաւոր իմաստներով՝ առաջին, մի ընդհանուր իմաստով, ակնարկելով Աստոյ յաիտենական հրովարտակին՝ այսինքն Աստոյ պատմութեան մէջ եղած ամեն բաների եւ ամեն եղելութիւնների նախակարգումը (Գործք Առաքելոց 4:28, Ա. Կորնթացիս 2:7). եւ երկրորդ, մի աւելի յատուկ իմաստով, ակնարկելով Աստոյ որոշումը կամ ընտրութիւնը, կատարած անցեալի յաիտենականութեան մէջ, մարդկանց վերջնական նպատակավայրի վերաբերեալ: Հռովմայեցիս 8:28–30ը նախասահմանութեան այս երկրորդ, աւելի յատուկ իմաստով է հետաքրքրւած:

Նախասահմանութիւն մի բառ կամ վարդապետութիւն չի որ Քալվինն է հնարել, ոչ էլ Վերակազմ եկեղեցին, իսկ այդ Սուրբ Գրքում գտնուած մի բառ է (Հռովմայեցիս 8:29-30, Եփեսացիս 1:5, 11), եւ մի վարդապետութիւն որը ներկայ է Սուրբ Գրքում (Գործք Առաքելոց 13:48, Հռովմայեցիս 8:33, Եփեսացիս 1:4, Ա. Թեսաղոնիկեցիս 1:4, Ա. Պետրոս 1:1): Պատմութեան մէջ եղած բոլոր գլխաւոր եկեղեցիները ունեցել են կամ ընդունել են այս վարդապետութեան որոշ ձեւը: Ուրեմն մեր առջեւ գտնուող իսկ հարցը այդ չէ որ արդեօ՞ք նախասահմանութիւնը սուրբ գրային է, այլ թէ արդեօ՞ք մենք ուղիղ ենք հասկացել այդ ինչ որ Սուրբ Գիրքը ուսուցանում է այս վարդապետութեան առթիւ: Նախասահմանութեան ամենատարծւած գաղափարը ճանաչւած է որպէս նախագիտակ տեսանկիւնը՝ նախկին գիտութիւն, ուսուցանելով որ Աստոյ մարդկանց փրկելու կամ ոչ փրկելու ընտրութիւնը հիմնուած է Նրա մարդկանց որոշումների նախագիտութեան վրայ: Այսինքն, Աստուած նայում է դէպի ապագայ, տեսնում է թէ մարդիկ աւետիսի հանդէպ ինչպէս են պատասխանում, եւ դրա հիման վրայ Նա կատարում է Իր որոշումը, կամ նախասահմանում է մարդկանց դէպի դրախտ կամ դժոխք: Այս տեսանկիւնը մի «պայմանական» նախասահմանութիւն է, քանի որ Աստոյ ընտրութիւնը կախեալ է մարդկանց որոշումներից կամ հաւատքից: Այս նաեւ ճանաչւած է որպէս Արմենական տեսանկիւնը, եւ նման տարբերակները ընդունուած են Կաթոլիկ եւ Օրթոտոքս (Առաքելական) եկեղեցիներում: Նախասահմանութեան միւս գլխաւոր գաղափարը՝ ճանաչւած որպէս Վերակազմ տեսանկիւնը, մի «անպայմանական» նախասահմանութիւն է, քանի որ Աստոյ ընտրութիւնը անկախ է որեւէ մարդկային որոշումից, այլ հիմնուած է Աստոյ յաիտենական եւ գերիշխան հրովարտակի վրայ: Այս տեսանկիւնը այսօրայ եկեղեցիների եւ Քրիստոնեաների փոքրամասնութեան տեսանկիւնն է:

Նախագիտութիւն – «Նախագիտութիւն» բառը գալիս է Յունարէն «փռա-գիտութիւն» բարդ բառից նշանակելով նախօրօք գիտենալ: Նոր Կտակարանում գիտութիւն բառը ունի երկու յատակ կամ տարբեր իմաստներ: Առաջին, այդ նշանակում է ունենալ մի բանի կամ մի անձի առթիւ մի մտաւորական տեղեկութիւն կամ հասկացողութիւն: Հռովմայեցիս 1:21ում Պողոսը ասում է թէ ամեն մարդ ունի Աստոյ առթիւ բաւարար տեղեկութիւն՝ Նրա ընդհանուր յայտնութեան միջոցով, որպէսզի իմանալ (գիտենալ) որ Նա գոյութիւն ունի: Երկրորդ, այդ նշանակում է ունենալ մի բանի կամ մի անձի առթիւ մի մտերիմ կամ աւելի խորը գիտութիւն: Ա. Կորնթացիս 2:14ում Պողոսը ասում է թէ բնական մարդը՝ լինելով հոգեւորապէս մեռած, չգիտէ Աստուն մտերմաբար, անձամբ, եւ հոգեւորապէս (Մատթէոս 7:21-23): Նաեւ ուրիշ համարներում, ինչպէս Յովհաննէս 10:14ում եւ Ա. Կորնթացիս 8:3ում «գիտութիւն» բառը գործածել է նշանակելու Աստու եւ Իր ժողովրդի միջեւ եղած մի յատուկ եւ անձնական յարաբերութիւն: Սրանք պարզօրէն ակնարկում են մի փրկարար գիտութիւն, ու ոչ միայն մի բանի առթիւ եղած տեղեկութիւն: Մենք նաեւ տեսնում ենք այս Հին Կտակարանում, Եբրայերէն «եադա» բառով (Մանդոց 4:1, 18:19, Երեմիա 1:5, Ամովս 3:2, Ովսէէ 13:5):

Հռովմայեցիս 8:29ում Պողոսը խօսում է գիտութեան այս երկրորդ, աւելի հարուստ իմաստի մասին՝ այսինքն Աստուած որոշեց որ մեր հետ մի մտերիմ յարաբերութեան մէջ ներս մտնել, ու սիրել մեզ մի յատուկ կերպով: Ուստի, Ար Սի Սփրոլն բացատրում է թէ՛ «Մենք իրաւի կարող ենք թարգմանել այս համարը (Հռովմայեցիս 8:29ը) որպէս՝ «նրանց որ նա նախասիրեց (այսինքն նրանց որ նա գիտէր մի անձնական, մտերիմ, փրկարար իմաստով՝ բոլոր յաիտենականութիւնից) նա նախասահմանեց»»:

Առաւել, Հռովմայեցիս 8:29ը չի խօսում Աստոյ մարդկանց արարքների նախագիտութեան մասին, այլ Նրա մարդկանց նախագիտութեան մասին՝ «նրանց որ նախագիտեց, նախասահմանեց էլ»: Այս նշանակում է Աստոյ որոշ մարդկանց առթիւ եղած անձնական գիտութիւնը՝ որոշելով անցեալի յաիտենականութեան մէջ որ ջոկել դրանց որպէս Իր սիրոյ առարկաներ (Եփեսացիս 1:3-5, Ա. Պետրոս 1:1-2): Նաեւ Ա. Պետրոս 1:20ում նոյն բառը գործածուում է Յիսուսի վերաբերեալ, ուր Աստուած անցեալի յաիտենականութեան մէջ անցաւ Իր Որդու հետ մի յատուկ ուխտադրութեան մէջ՝ ուր Նա սահմանեց, ընտրեց, եւ ջոկեց որպէսզի լինի Իր ժողովրդի, ընտրեալների Փրկիչը:

Իրականում, Արմենական նախասահմանութեան տեսանկիւնում, Աստուած փաստօրէն չի ընտրում կամ նախասահմանում որեւէ մէկին փրկութեան, քանի որ Նա միայն կարող է ապագան տեսնել, դիտել մարդկանց արարքները, ու ապա միայն վաւերացնել այդ որոշումները կամ գրի առնել դրանց՝ ինչպէս Կեանքի Գրքի մէջ (Յայտնութիւն 13:8): Նա դառնում է մի փառաւորած քարտուղար, արձանագրելով մարդկանց որոշումները, եւ մնում է որպէս միայն մի ակնատես՝ կրաւորականօրէն սպասելով այդ որոշումների կատարման: Այս եկեղեցիների մէջ խիստ տարածուած տեսանկիւնը սաստիկօրէն անարգում է Աստուն ու Նրա ստորագելիները, եւ յատկօրէն հակառակ է Սուրբ Գրքի ուսուցչութեան: